

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՂՂՈՑ. — Գաղղիոյ աշխարհագրական ընկերութիւնն 1872 տարւոյն վերջերը կը համարէր 752 ընկեր և 19 թղթակից:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՈՆՑ. — Լոնտոնայի աշխարհագրական ընկերութեան թիւն կը հասնի 2500ի, որ կը գերազանցէ քան զամենեսին. և դրամագլուխն է 600,000 ֆր. իսկ եկամուտն 170,000 ֆր.:

3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԵՌԼԻՆՔ. — Հնութեամբ Գաղղիոյ ընկերութենէն ետքը այս ընկերութիւնն կու գայ, և կը համարէ 450 ընկեր, որ յարգելի թիւ մ'է եթէ մտածեմք որ Գերմանիոյ մէջ այս առումամբ կան ուրիշ 11 ընկերութիւնք ալ:

4. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊՈՐՊՈՅԻ. — Այս ընկերութիւնն կը համարէ գրեթէ 200 ընկեր, որոց ութսունը 'ի Պոմպայ կը նստին և 120 յԵւրոպա: Այս ընկերութեան եկամուտն է 1000 ֆր. իսկ դրամագլուխը 12,000: Քիչ են իր հրատարակութիւնքն, բայց շատ հետաքրքրականք են, մասնաւորապէս Հնդկաստանի վրայ պարունակած տեղեկութեամբքը:

5. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՖՐԱՆԿՅՈՐԴԻ. — Այս ընկերութիւնը հիմնուեցաւ յամին 1855, և կը համարէ 286 ընկեր, և 45 թղթակից անդամ: Կը հրատարակէ մէկ քանի տետրակներ 2700 ֆր. տարեկան խեղճ եկամուտով, առանց ձեռնտուութեան տէրութեան:

6. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՊՐԷՋԻԼԻ. — Այս ընկերութեան անդամոց թուոյն և իր դրամագլխոյն նուազութեանը պատճառաւ կը կոչեմք զայն ժողով պետական, և յիրաւի տէրութիւնն է որ կը հոգայ իր ծախուց կէսէն աւելին:

7. ԿԱՏՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԻՅԱ. — Երևելի է այս ընկերութիւնը բազմապիսի հրատարակութեամբքը: Կենդրոնական տեղին Բիէդրոպուրկ է, բայց այլ և այլ երկրորդական ճիւղեր ալ ունի տէրութեան գլխաւոր քաղաքաց մէջ. ինչպէս 'ի Թիֆլիզ, որ հաստատուեցաւ յամին 1850, և ընկերաց թիւն է 100: Բաց 'ի իր եկամուտէն ունի և տէրութենէ գրեթէ 9000 ֆրանք: — Երկրորդ կուգայ Իրքուզսք, որ կը համարէ 170 ընկեր, որ և սա վերնոյն նման ունի 'ի տէրութենէ 9000 ֆրանք:

8. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԱՐՄՇԴԱՏԻ. — Այս ընկերութեան ընկերակցաց թիւն է գրեթէ 70, և իր տարեկան եկամուտն 700 ֆրանք:

9. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱԱԿԱՑ. — Այս ընկերութիւնը կը համարէ 260 ընկեր, դրամագլուխն է 14,000 ֆր. իսկ եկամուտն գրեթէ 10,000 ֆր.:

10. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻԻԵՐԳԱՑ. — Կը համարէ 600 ընկեր, և ունի 18,000 ֆրանքի եկամուտ: Միացեալ Նահանգաց մէջ կամաց կամաց ուրիշ աշխարհագրական ընկերութիւնք ալ ձևանալու վրայ են:

11. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՑ. — Վեննայի աշխարհագրական ընկերութիւնը 1872 տարւոյն վերջերը կը համարէր 526 ընկեր: Եկամուտն էր 3007 ֆիորին, իսկ ծախքն 3157 ֆիորին:

12. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԻՔՍԵՆԲՈՐԳ. — Կը թուէ 260 ընկեր, բայց ժամանակէ 'ի վեր իր հրատարակութիւնքն նուազեցան:

13. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏՐԵՋՏԱՑ. — Այս ընկերութիւնը մինչև անցեալ տարւոյն վերջերը կը թուէր 35 պատուոյ ընկեր և 38 թղթակից ընկեր:

14. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄՈՆԱԲՈՑԻ. — Այս ընկերութիւնն կը համարէ 311 գործօն ընկեր և 10 պատուոյ ընկեր:

15. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՈՒՆԳԱՐԻՅԱ. — Այս ընկերութիւնը տարւոյս յունուարի 12ին երկամեայ կենաց մէջ մտաւ: Աւարտելով նախնական կարեւոր պատրաստութիւններն, սկսաւ փետրուարի առաջին օրէն երկամեայ տետրակ մը հրատարակել, որուն մէջ կը խօսի 1872 ամին աշխարհագրական գլխաւոր պատահարաց վրայ: — Ընկերաց թիւն է 302 հոգի, որոց մէջ կան և 45 տիկնայք:

16. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՈՒԱՆՏՈՑ. — Տարւոյս մարտի 6ին հաստատուեցաւ Ամպուրկ քաղաքին մէջ նոր աշխարհագրական ընկերութիւն մը. և մէկէն ընկերութեան անդամոց թիւն եղաւ 126 հոգի:

17. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՅԱ. — Այս ընկերութիւնը ձևացաւ յամին 1867: Առաջին տարին 120 ընկեր կը համարէր, երկրորդ տարին 500, երրորդ տարին 800, չորրորդ տարին 1200, և անցեալ տարւոյն դեկտեմբերին 1520 ընկեր:

Ասոնցմէ զատ կան ուրիշ մէկ քանի աշխարհագրական ընկերութիւնք, որոնք շատ մեծ նշանակութիւն կամ գործունէութիւն չունենալնուն՝ զանց կ'առնեմք յիշատակել աստանօր: